

ԳՐԱՔԱՐԻ ՏԻՊԱՔԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՓՈՐՁ

(2. Գրիմբերգի երկու մեթոդի մասնակի կիրառումը դասական գրաբարի տիպաբանական վերլուծության մեջ)

1. Արդի լեզվաբանության բուռն զարգացում ապրող բաժիններից է կառուցվածքային տիպաբանությունը, որն իր վերլուծությունների հիմք է ընդունում լեզվի կառուցվածքը: Լեզվաբանական գրականության մեջ շատ հաճախ առկա է «կառուցվածք» (ստրուկտուրա) և «համակարգ» (սխեմա) տերմինների անհստակ գործածությունը, որի հետևանքով դրանք զրեթե նույնացվում են և դիտվում որպես համարժեքներ (հոմանիշներ): Տրամաբանական է լեզվի «կառուցվածք» հասկացությունը որոշակիորեն սահմանադատելը «համակարգ»-ից¹: Այդ դեպքում լեզուն կարելի է դիտել որպես կառուցվածքի և համակարգի միասնություն:

Հայոց լեզվի քերականական կառուցվածքի քննության համար անհրաժեշտ է. «հստակ կերպով տարբերակել երկու կողմ՝ քերականական սխեմայի բաղադրիչները (նյութը, միջոցները) և այդ բաղադրիչների փոխհարաբերության տիպերը (ձևը, եղանակները): Առանց այդ երկու կողմի հստակ տարբերակման չի կարելի ճիշտ կերպով պարզաբանել ոչ հին ու նոր, ոչ էլ բնիկ ու օտարաբնակ տարրերի փոխհարաբերությունը: Մինչդեռ դրանք հաճախ շփոթվում են»²:

Կառուցվածքային առանձնահատկություններով որևէ լեզվատիպ բացահայտելիս հնարավոր է տվյալ լեզուն համեմատել ինչպես այլ լեզուների, այնպես էլ՝ միևնույն լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերի հետ: Սակայն, ի տարբերություն պատմա-համեմատական լեզվաբանության, կառուցվածքային տիպաբանությունը համեմատությունների միջոցով ծագումնաբանական ընդհանրություններ չի որոնում, նրա համար ոչ մի նշանակություն չունի՝ համեմատվող լեզուները ցեղակից են, թե ոչ: Կառուցվածքային տիպաբանության նպատակը լեզուների բերականական կառուցվածքների ընդհանրությունների և յուրահատկությունների բացահայտման մեջ է: Իսկ այդ ոչ թե պատահականորեն ընտրած մեկ կամ մի քանի հատկանիշներով է իրագործվում, այլ հատկանիշների մի ամբողջ հանրագումարով: Լեզուների կառուցվածքային յուրահատկությունների դրսևորման համար անհրաժեշտ է հեռու մնալ տվյալ լեզվի կառուցվածքին, համակարգին խորթ գծերից, հիմք ընդունել միայն բնորոշն ու կականը: Տերմինների միանշանակ կիրառության և իմաստների կոնկրետության հասնելու ձգտումը համընդհանուր տենդենց է ինչպես ընդհանրապես արդի լեզվաբանության³, այնպես էլ, մասնավորապես, կառուցվածքային տիպաբանության համար:

Չնայած որ նախկին, ձևաբանական տիպաբանությունը դուրս է մղվում ասպարեզից, նրա հիմնական տերմինները (թեքական, կցական, անջատական) օգտագործվում են նաև կառուցվածքային տիպաբանության մեջ: Սակայն, շնորհիվ ճշգրիտ մեթոդների կիրառության, էտալոն լեզուների ստեղծման և այլն, այդ տերմինները ավելի կոնկրետ իմաստներ են ստացել: Ժամանակակից տիպաբանությունն իր օբյեկտիվության համար հիմնականում պարտական է էտալոն լեզվի ստեղծմանը: Դա այն հիմքն է, որից «պոկվելով»՝ տիպաբանական բնութագրման են ենթարկվում լեզուները: Այդ դեպքում սուբյեկտիվ ու քմահաճ մոտեցման փոխարեն անհրաժեշտություն է զգացվում կատարելու հետևողական ու կապակցված ուսումնասիրություն:

1 Տե՛ս Բ. Ն. Գ ո լ ո վ ի ն, Լեզվաբանության ներածություն (նուսերեն), 1966, էջ 219:

2 Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հին հայերենի հոլովման սխեմայի և նրա ծագումը, 1959, էջ 3—4:

3 Օրինակ, «դրաբար» տերմինի իմաստային կոնկրետացումը պրոֆ. Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» և պրոֆ. էդ. Աղայանի «Գրաբարի քերականություն» հ. 1 աշխատություններում:

2 լեզուների առանձնահատկություններն ու ընդհանրությունները բացահայտելու մի յուրահատուկ մեթոդ է առաջարկել Ջ. Գրինբերգը: Այն հնարավորություն է տալիս ի հայտ բերել ամենատարբեր լեզուների կառուցվածքային (կցման, թեքման, բառարարդման, ածանցման) բաղադրիչ զմեռ ոչ թե ցար ու ցրիվ, այլ նախապես ընտրած մի շարք էական հատկանիշների միջոցով: Մեթոդը կոչվում է Դանակական, թեև ամենեին էլ չպետք է կարծել, ինչպես եզրակացնում են ոմանք, թե լեզվի որպես այդտեղ անտեսվում է: Ընդհակառակն, ամեն մի քանակական վերլուծություն վերջիվերջո մի նպատակ ունի միայն, այն է՝ որակի բացահայտումը: Այլապես, քանակական մեթոդի կիրառումը կլինի աննպատակ:

Ջ. Գրինբերգի մեթոդը հիմնված է տասը ցուցիչների վրա՝ համադրման, կցման, բառարարդման, թեքման, նախածանցման, վերջածանցման, համաձայնության և այլն, որոնք կիրառելի են բոլոր լեզուների նկատմամբ: Սույն հոդվածում վերլուծության համար վերցրել ենք այդ տասից երկուսը՝ համադրման և բառարարդման ցուցիչները (ամենեին չմխտելով մնացած ուրիշ կարևորությունը, որովհետև նրանք նույնպես կարող են վեր հանել որոշակի հետաքրքրություն ներկայացնող լեզվական երևույթներ):

Համադրման ցուցիչը ձևույթների (Ձ) թվի հարաբերությունն է բառերի (Բ) թվին՝ $\frac{\text{Ձ}}{\text{Բ}}$, բառարարդման ցուցիչը արմատական ձևույթների (Ա) (արմատների) հարաբերությունն է բառերի թվին՝ $\frac{\text{Ա}}{\text{Բ}}$: Ինչպես նշել է Ջ. Գրինբերգը, այդ հատկանիշով աշխարհի լեզուները մեծապես տարբերվում են իրարից՝ կան լեզուներ, որոնք չեն կիրառում բառարարդումը և ընդհակառակը՝ Համադրման ցուցիչը որոշ չափով կախված է բառարարդման ցուցիչը՝ ինչքան համադրման ցուցիչը մոտենում է մեկի (մեկից փոքր նա չի կարող լինել, որովհետև ամեն մի բառ ծայրահեղ դեպքում պետք է առնվազն մեկ արմատական ձևույթ ունենա), այնքան բառարարդման ցուցիչ արժեքը նվազում է, քանի որ միայն ուժեղ արտահայտված համադրման դեպքում կարելի է ենթադրել, որ բառարարդման ցուցիչը նույնպես բարձր կլինի:

3. Ինչքան պետք է լինեն ընտրանքի ծավալի և բույլատրելի հարաբերական սխալի մեծությունները: Սովորաբար տիպաբանական վերլուծության ենթակա հատվածների (տեքստերի) ծավալը վերցվում է 100 բառ: Այսինքն, ընտրանքի ծավալը 100 բառի սահմաններում համարվում է բավարար⁴: Հարաբերական սխալի մեծությունը կարելի է որոշել հետևյալ վիճա-

կադրական բանաձևից՝ $\sigma = \sqrt{\frac{q}{np}}$, որտեղ σ -ն հարաբերական սխալի նշանն է,

n -ն հաստատուն մեծություն է (ունի 1, 2 և 3 արժեքներ),

p -ն փնտրելիք մեծություն է,

q -ն հավասար է $1-p$,

n -ը ընտրանքի ծավալն է:

Եթե $n=2$, յուր նշանակում է, որ վերլուծությունից ստացած արդյունքների կայունությունը հավասար է 0,95-ի, այսինքն՝ հարյուր դեպքից իննսունհինգ անգամ կստացվեն նախորդ վերլուծությունից ստացած արդյունքներին հավասար տվյալներ: Ե-ի՝ թույլատրելի սխալի մեծությունը կրկնակի անգամ փոքրացնելու համար անհրաժեշտ է ընտրանքի ծավալը՝ n -ը մեծացնել քառակի չափով: Դասական գրաբարի համադրման և բառարարդման ցուցիչները որոշելիս ընտրանքի ծավալը վերցրել ենք Ջ. Գրինբերգի և այլոց⁵ կողմից ընդունած ծավալի (երբեմն՝ անգամ կրկնակի ու եռակի) չափով:

4. Հատվածները վերցրել ենք մեկ դասական մատենագիրների ստեղծագործություններից, այն է. ա) Ագաթանգեղոսի պատմության առաջաբանից՝ «Ընթերցեալ զԲորգոմեայ ազգիս...» մինչև «ի մերոյ ծովափաստակ նաւաստեացս»,

4 Եստե ենք ընդունել երկու բացատների միջև ընկած ամեն մի տարածություն: Առանձին բառ չենք հաշվել միայն ի նախդիրը, նկատի ունենալով նրա մերթ առանձին զրվելու և մերթ էլ ձայնավորով սկսվող բառին միանալու յուրահատկությունը:

5 Վերոհիշյալ վիճակագրական բանաձևի մասին մանրամասն տե՛ս Բ. Կ. Ղազարյան, Հայաստանի բառարանի յուրահատուկ կողմերը, «Լրարեր հասարակական գիտությունների», 1966, № 9, էջ 81:

6 Տե՛ս «Лингвистическая типология и восточные языки», 1965 թ.:

- բ) Կորյունի Գ ղլուխը, Ե ղլուխը մինչև «...մատուցանէր»,
 գ) Եղիշեի երկրորդ ղլխից՝ «որոց» ձգիքն թուլացեալ են» մինչև «մեծ է տեսաւորութիւն մտառքան զմարմնոց»,
 դ) Եզնիկի առաջին գրքի առաջին ղլխից՝ «Յորժամ դաներեւութէն» մինչև «առ ի յայտնելոյ զիւրոյ զբարեբարութեան հանդէս» և երկրորդ գրքի Գ ղլխից՝ «Եւ զի ճշմարիտ է բանս...» մինչև «որպէս մտաց զբան»,
 ե) Փափստոսի պատմության Ե դպրության ԼԲ ղլխից՝ «Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ» մինչև «զայն առնիցեն»,
 զ) Հատվածներ բանահյուսությունից,
 Վերլուծության արդյունքները տրված են աղյուսակ N° 1-ում:

Աղյուսակ N° 1

	Ազգաթանգեղոս		Կորյուն		Եղիշե		Եզնիկ		Փափստոս		Բանահյուսություն		Միջին	
	բառեր	0/0	բառեր	0/0	բառեր	0/0	բառեր	0/0	բառեր	0/0	բառեր	0/0	բառեր	0/0
Համադրում	234	2,29	151	2,21	100	2,02	367	2,01	300	2,00	348	1,98	1500	2,09
Բառաբարդում	234	1,13	151	1,08	100	1,05	367	1,04	300	1,03	348	1,03	1500	1,06

Բնական է, որ վերցրած քանակական այդ երկու ցուցիչով գրաբարի տիպաբանական ամբողջական պատկերը տալ հնարավոր չէ և, միաժամանակ, այս հոդվածի նպատակից վեր է: Դա կարելի է իրագործել ոչ միայն ք. Գրիքերգի քանակական մեթոդի բոլոր տասը ցուցիչների վերլուծությամբ, այլ նաև մանրակրկիտ բնության առնելով գրաբարի մնացած ոլորտները, օրինակ՝ հնչյունաբանությունը, շարահյուսությունը:

Ինչպես ևրևում է աղյուսակ N° 1-ից, համադրման և բառաբարդման ամենաբարձր ցուցիչները Ազգաթանգեղոսին են, ապա՝ Կորյունինը. այնուհետև, այդ ցուցիչները աստիճանաբար նվազում են Եղիշեի, Եզնիկի, Փափստոսի մոտ: Բանահյուսության տվյալները գրեթե նույնա-նում են Փափստոսի համապատասխան տվյալներին: Նկատելի է, որ բառաբարդման տատանումները աննշան են բոլոր հատվածների համար: Զգալի տարբերությունը տալիս է Ազգաթանգեղոսից վերցրած տվյալ հատվածը և պայմանավորված է ոճական առանձնահատկություններով: Դրանում համոզվելու համար բավական է մեջ բերել մի հատված. «Յորժամնախոր, լայնանիստ, յարածօճ, անդնդապտոյտ, սառսռասէր, անհանգիստ, արշաւասոյր, օղավար, յուզակ ալեացն սրավարացն մոլեգնելոցն»: Միայն վերը բերված բառերի մեջ կան 21 արմատական ձևայիններ (արմատներ), այն դիպքում, երբ Կորյունի, Եղիշեի, Եզնիկի և Փափստոսի բառաբարդման միջին ցուցիչը տատանվում է 1,05-ի շուրջը (100 բառին միջին հաշվով ընկնում է 105 արմատական ձևային): Աղյուսակ N° 1-ից կարելի է հետևյալ եզրակացությունն անել. դասական հայերենի համադրման ցուցիչ արժեքները տատանվում են 2,00-ի շուրջը: Այսինքն, ամեն բառի միջին հաշվով երկու ձևային է ընկնում: Պարզ է, որ այդ ամեննին էլ չի նշանակում, թե ամեն բառ պետք է երկու ձևային պարունակի: Կան առանձին բառեր, որտեղ ձևայինների թիվը անցնում է հինգից և շատ ու շատ բառեր, որտեղ ձևայինների թվի հարաբերությունը բառերի թվին հավասար է մեկի (այսինքն՝ ամեն բառ մի ձևային է): Սակայն գերակշռելի մաս են կազմում ձևային բառերի 3/4, 2/3 հարաբերությունները:

5. Լեզվակառուցվածքները լեզվի զարգացման ընթացքում փոփոխվում են: «Հետևարար զարմանալի ոչինչ չկա այն բանում, — գրում է Վ. Սկալիչկան, — որ ծագումնաբանորեն ցեղա-կից լեզուները շափազանց տարբեր են տիպաբանության տեսակետից, օրինակ, ֆրանսերեն, չեխերեն և հայերեն լեզուները»⁷, Եվ ահա, հետաքրքիր էր իմանալ, թե ինչպիսին կլինի դասա-

7 В. С к а л и ч к а, О современном состоянии типологии, сб. «Новое в лингвистике», вып. III, Москва, 1963, стр. 22.

կան զրաբարից վերցրած տեքստերի և այդ նույն տեքստերի աշխարհաբար թարգմանությունների համապատասխան ցուցիչների ընդհանուր պատկերը: Դրա համար վերցրեցինք Կորյուների Գ և Ե զուխները (ե զուխը մինչև «Քրիստոսի մատուցանէր»), եղիշեի երկրորդ զլխից «որոց ոգիքն թուլացեալ են» մինչև «մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց», չորրորդ զլխից «մինչև ցայս վայր» մինչև «կամքն կատարեսցին յաշխարհին» և համապատասխան հատվածների աշխարհաբար թարգմանությունները: Այդ հատվածների համադրման և բառաբարդման ցուցիչների համեմատական տախտակը տրված է աղյուսակ N° 2-ում:

Աղյուսակ N° 2

	Գորյուն		Եղիշե		Միջինը		
	Գրաբար	աշխարհաբար	Գրաբար	աշխարհաբար	Գրաբար	աշխարհաբար	
Համադրում	1	2,28	1,91	2,02	1,84	2,15	1,87
	2	2,14	1,93	1,83	1,66	1,99	1,79
Բառաբարդում	1	1,07	1,03	1,02	1,01	1,05	1,02
	2	1,08	1,09	1,04	1,03	1,06	1,06

Ինչ եզրակացություններ կարելի է անել աղյուսակ N° 2-ից, Գրաբարի համադրման ցուցիչների դիմաց աշխարհաբարի համապատասխան ցուցիչները ցածր են:

Եթե համադրման ցուցիչը գրաբարում ստանում է իր միջին արժեքից ցածր քվային արտահայտություն, ապա նրա աշխարհաբար թարգմանության ցուցիչը ավելի ևս ցածր է ստացվում: Ինչով պետք է բացատրել այդ Ամենից առաջ՝ հայոց լեզվի կառուցվածքի մեջ կատարված նշանակալից փոփոխություններով: Հենց միայն խոնարհման համակարգից բավական է հիշատակել ներկա, անցյալ անկատար ժամանակների զրաբարյան պարզ կազմությունը, որոնք լեզվի հետագա զարգացման ընթացքում վերածվել են բաղադրյալ ժամանակների: Դա հայոց լեզվի համադրականությունից վերլուծականություն գնալու ընդհանուր տենդենցի արտահայտություններից միայն մեկն է: Սակայն եթե համադրման տեսակետից զրաբարը իր զարգացման հետագա ընթացքում գնացել է դեպի վերլուծականություն (անալիտիզմ), ապա բառաբարդման տեսակետից զրեթե մնացել է անփոփոխ (թե՛ զրաբարում և թե՛ աշխարհաբարում Ա/Բ 1,06): Գրաբարի և աշխարհաբարի համադրման և բառաբարդման ցուցիչների հակադրության ռեալ պատկերը ստանալու համար վերցրեցինք Ալ. Շիրվանզադեից երկու հատված («Արսեն Դիմաքսյան», էջ 82—83, «Չնայելով նոր անհյուրընկալ...» մինչև «ապրում է կենդանի էակ» և 83-րդ էջից «նա պահում էր» մինչև «խոնավ ձեռներում»): 100 բառանոց առաջին հատվածի տվյալներն են՝ Զ/Բ—1,89, Ա/Բ—1,06: Երկրորդ հատվածի տվյալներն են՝ Զ/Բ—1,87, Ա/Բ—1,09:

6. Այժմ կարելի է տալ ինչպես դասական զրաբարի ու աշխարհաբարի, այնպես էլ զրաբարի և այլ լեզուների համադրման ու բառաբարդման համեմատական տախտակը:

Աղյուսակ N° 3

	Ուն- կրիա	Գրա- բար	Անգլո- սաքսոն.	Աշխար- հաբար	Անգլի- բեն	Պարսկե- րեն	Վիետնա- մերեն	Էսկիմո- սերեն
Համադրում	2,59	2,09	2,12	1,88	1,68	1,52	1,06	3,72
Բառաբարդում	1,13	1,06	1,00	1,07	1,00	1,03	1,07	1,00

Տվյալները (բացառությամբ հայերենի) բերվում են ըստ Ջ. Գրինբերգի: Տե՛ս «Новое в лингвистике», III պրակ, էջ 93:

2. Գրիբերգի նշել է, մի կողմից, անգլո-սաքսոններն ու սանսկրիտի և մյուս կողմից, պարսկերենի ու անգլերենի ասլանցուցիչ նմանությունը: Աղյուսակ N 3-ից ավելի ակնհայտ է գրաբարի ու սանսկրիտի միջև եղած բացահայտ նմանությունը: Իրոք, սլաշեցուցիչ է այդ նմանությունը, եթե ի նկատի ենք ունենում, որ Ագաթանգեղոսի տվյալները (հատկապես՝ բառարանում (1,13) ղրէթն նույնանում են սանսկրիտի համապատասխան տվյալներին: Թվում է պատահական չէ, որ մեր մյուս մատենագիրներից Ագաթանգեղոսի ցուցիչներն են ավելի մոտ սանսկրիտի տվյալներին (Ագաթանգեղոսի պատմությունը դասական գրաբարի ավելի վաղ շրջանի գործ է): Այնուհետև սանսկրիտի տվյալներին ավելի մոտ են Կորյունի ցուցիչները: Այսպես, ինչքան ժամանակային առումով ետ ենք գալիս, այնքան փոքրանում է գրաբարի համադրման ցուցիչը: Զարգացման այդ ընդհանուր տենդենցը առկա է նաև մի շարք հին լեզուներում՝ սանսկրիտ, անգլո-սաքսոններեն, որոնց նոր լեզվավիճակները՝ անգլերեն, պարսկերեն, արդեն վերածվել են վերլուծական լեզուների: Գրաբարը ևս, ինչպես երևում է աշխարհագրորդի հետ համեմատելուց, զարգացման նույն ուղին է անցել: Թեև, պետք է ասել, որ աշխարհագրորդի համեմայն ղեպս, ավելի մեծ համադրման և բառարանում արժեքներ ունի, քան ժամանակակից անգլերենը կամ պարսկերենը: Ավելացնենք նաև, որ լեզվի քերականական կառուցվածքի մեծ որակական անցումները սլաշեցուցիչ լինելով և որ լեզվի հին ու նոր որակների «սահմանագծումները ավելի կամ պակաս չափով պատմական բնույթ են կրում, որովհետև անցումը մի շրջանից կամ փուլից մյուսին տեղի է ունենում առանց որևէ «պայթյունի», քանակական աստիճանի կուտակումների՝ որակական աճում տալու հանապարհում»⁹:

7. Այսպիսով, Գրիբերգի քանակական մեթոդի օգնությամբ նարավորություն է ընձեռվել թվային կոնկրետ արժեքներով որոշել գրաբարի կառուցվածքային տիպը ըստ 2 ցուցիչի, տալ այդ լեզվատիպի հետագա փոփոխությունները՝ համեմատության մեջ դնելով այլ լեզուների կառուցվածքային համապատասխան արժեքների հետ: Այսպես, ընդունելով, որ վերլուծական կոլում է այն լեզուն, որի համադրման ցուցիչը 1,00—1,99 է, համադրականը՝ 2,00—2,99, բազմահամադրականը՝ 3 և 3-ից բարձր, կարելի է ասել, որ դասական գրաբարի քանակական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ գրաբարը համապատասխան լեզու է: Գրաբարը և սանսկրիտը տիպարանական մերձակից լեզուներ են: Գրաբարի և սանսկրիտի, ինչպես նաև՝ քանակական տվյալներով նրանց նմանօրինակ անգլո-սաքսոններենի արդի վիճակների (ժամանակակից հայերենի, հնդ-իրանական խմբից՝ պարսկերենի և գերմանական խմբից՝ անգլերենի) տիպարանական տվյալները նույնպես մոտ են իրար: Դա վկայում է գրաբարի, սանսկրիտի և անգլո-սաքսոններենի մեջ բավական երկարատև ժամանակաշրջանում միևնույն լեզվակառուցվածքային փոփոխությունների գոյությունը, այդ լեզուների պատմական փոփոխությունների միասնական ու ընդհանուր ուղղության առկայությունը:

8. 2. Գրիբերգի կողմից առաջարկվել է լեզուների տիպարանական դասակարգման մի մեթոդ ևս, որը կրում է «բառերի հիմնական կարգի (հաջորդականության) տիպարանություն» Basic order typology անվանումը: Ինչպես հայտնի է, կառուցվածքային տիպարանությունը, հակառակ հին տիպարանության, ամենից առաջ աչքի է ընկնում լեզուների դասակարգման միասնական սկզբունքով, այն է՝ ինչպես են կապակցվում և դասավորվում ձևայինները (բառական և քերականական): 2. Գրիբերգի մեթոդը (խոսքը նոր մեթոդի մասին է) խարսխվում է երեք հատկանիշների վրա: Առաջին հատկանիշը բացահայտում է բառերի հիմնական կարգը: Ենթական նշանակելով s տառով (subjektum), բայը—v (verbum), իսկ խնդիրը—o (objektum), Գրիբերգը 30 լեզուների ուսումնասիրությունից ստացած արդյունքների հիման վրա եզրակացնում է, որ լեզուները օգտագործում են բառերի դասավորության հիմնականում երեք ձև՝ I VSO, II SVO, III SOV:

Այստեղ, իհարկե, խոսքը լեզուների կիրառած ճիմնական ձևերի մասին է, այլապես այնպիսի չկիրառվող մի ձև, ինչպիսին է OVS¹⁰ կարելի է հեշտությամբ գտնել մի շարք լեզուներում, այդ թվում նաև՝ հայերենում և ռուսերենում¹¹, Երկրորդ հատկանիշը բացահայտում է սպասարկու բառերի հաջորդականությունը: Այսինքն, թե ինչպիսի դիրք են զբաղում վերջիններս: Այն ղեպ-

⁹ Д. Ж. Гринберг, Квантитативный подход к морфологической типологии языков, сб. «Новое в лингвистике», вып. III, стр. 93.

¹⁰ Գ. Զահնիկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, էջ 32:

¹¹ Տե՛ս Ю. Степанов, Основы языкознания, Москва, 1966 г., стр. 139.

¹² Տե՛ս Б. Головин, Введение в языкознание, Москва, 1966 г., стр. 214.

քում, երբ դրվում են իշխող բառից առաջ, գործ ունենք նախդիրների հետ Pr (preposition), իսկ այն դեպքում, երբ դրվում են իշխող բառից հետո, ետադրություններ են՝ Po (postposition): Երրորդ հատկանիշով բացահայտվում է ածականների դիրքը: Գոյականից առաջ դրվող ածականը 2. Գրիներգրը նշանակում է Ա տառով, իսկ հետո դրվողը՝ Ն:

Այսպիսով, առաջին հատկանիշով լեզուների դասակարգման երեք տարբեր խմբերի հնարավորություն է ստեղծվում, իսկ վերջին երկու հատկանիշներով՝ լրացուցիչ երկուական խմբեր են: Գրիներգրի դասակարգման աղյուսակը ստանում է 12 վանդակ ($3 \times 2 \times 2$): Սակայն, բոլոր հնարավոր ձևերը չէ, որ իրացվում են, այսպես՝ բառերի VSO գլխավոր հաջորդականության Po—A, Po—N վանդակները դատարկ են, որովհետև համապատասխան շարադասություն ունեցող ոչ մի լեզու 2. Գրիներգրը չգիտի:

Վերահիշյալ հատկանիշների վրա հիմնված 30 լեզուների գրիներգրյան դասակարգման աղյուսակը հետևյալ տեսքն ունի

	I VSO	II SVO	III SOV
Po—A	0	1	6
Po—N	0	2	5
Pr—A	0	4	0
Pr—N	6	6	0

9. Ինչպես տեսնում ենք, իր այս մեթոդի հիմքում 2. Գրիներգրը դրել է որոշակի շարահյուսական հատկանիշներ: Գրաբարի դիրքը տրված աղյուսակի մեջ գտնելու համար նախ պետք է պարզել գրաբարի բառերի գլխավոր դասավորությունը: Ընդհանրապես, արևելահայերենի համար շարադասությունը կարծես թե՛ վճռական որևիցե դեր չի խաղում, այսինքն բառերի դասավորությունը բերականական միջոց չէ: «Մի մաքուր տեսավ մի կին» և «մի կին տեսավ մի մաքուր» օրինակը հայերենի իրոք սակավաթիվ դեպքերից է, որ բերում է պրոֆ. էգ. Աղայանը իր «Լեզվաբանության ներածություն» աշխատության միջ: «Իհարկե, այդպիսի օրինակներն էլ սովորական չեն ժամանակակից հայերենին, թեև քերականական տեսակետից սխալ չեն», — եզրակացնում է էգ. Աղայանը¹²: Այդ բերված օրինակում ենթական և ուղիղ խնդիրը որոշվում են իրենց գրաված դիրքով, թեև սովորաբար նախադասության անգամների դասավորությունները իմաստային և ֆունկցիոնալ այդպիսի խիստ զանազանումներ չեն առաջացնում: Այս բոլորով հանդերձ, չի կարելի չնշել, որ հայերենը այն լեզուների թվին է պատկանում, որոնց համար այնուամենայնիվ նախադասության գլխավոր անգամների շարադասությունը որոշակի է: Այսպես, ընդունված կանոն է թե՛ գրաբարի և թե՛ աշխարհագրարի համար, որ ենթական գրվում է ստորոգյալից առաջ՝ այսինքն ՏՎ և ոչ թե՛ ՆՏ, ենթակայից և ստորոգյալից հետո (հնարավոր են նաև՝ ենթակայի և ստորոգյալի միջև) դրվում են նախադասության այլ անգամներ: Որպես հիմնական կիրառություն կարելի է տալ գրաբարի շարահյուսական համակարգը բնութագրող այն զիծը, համաձայն որի որոշիչները, հատկացուցիչները, ինչպես նաև կապի խնդիրները ունեն ետադաս գործածություն: Պետք է նշել նաև գրաբարի նախդիրների զգալի կշիռն ու շարահյուսության մեջ խաղացած նշանակալից դերը: Նախդիրների միջոցով արտահայտվում էին ինչպես խնդրային, այնպես էլ պարագայական հարաբերությունները:

Իհարկե, Գրիներգրի առաջարկած հատկանիշների թիվը կարելի է ավելացնել, ինչպես նշել է Բ. Ուսպենսկին իր «Структурная типология языков» աշխատության մեջ այդ հատկանիշների թիվը կարելի է հասցնել մի այնպիսի աստիճանի, երբ դասակարգման յուրաքանչյուր վանդակում միայն մի լեզու մնա: Այժմ տեսնենք, թե ինչ դիրք է գրավում գրաբարը կառուցվածքային երեք հատկանիշների հաշվառումով, ինչ ընդհանրություններ և յուրահատկություններ ունի այլ լեզուների, ինչպես նաև իր պատմական զարգացման արդյունքն հանդիսացող արդի հայերենի համեմատությամբ: Դրա համար նախ տանք Գրիներգրի կողմից տրված լեզուների (30 լեզվի) տիպարական դասակարգման ընդհանուր աղյուսակը, համապատասխան վանդակի մեջ մտցնելով գրաբարը¹³:

¹² էգ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, 1952, էջ 291:

¹³ Աղյուսակը բերվում է կրճատումներով: Լրիվությամբ այն տրված է 3 ու. Ս տ ե պ ա ն ու վ ի նշված դասագրքի 140—141 էջերում:

	I VSO	II SVO	III SOV
Po—A	—	էստոններն, չինարեն	հինգի, բենգալի, ժամանակակից հայերեն, չին-տիբեթական լեզուներ
Po—N	—	աֆրիկյան մի շարք լեզուներ	շումերերեն, ավստրալիական լեզուներ, դասական տիբեթերեն
Pr—A	նահուաալը և մի քանի այլ լեզուներ	անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և այլ լեզուներ	ամհարերեն
Pr—N	երբայերեն (չչփոթելի իղիշի հետ), արաբերեն, պոլի-նեդիական լեզուներ	գրաբար, ֆրանսերեն, իսպաներեն	պարսկերեն, ակկադերեն

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, գրաբարի շարահյուսական համակարգն իր ցուցիչներով մտնում է II SVO Pr—N խմբի մեջ, այն դեպքում, երբ ժամանակակից հայերենը դասվում է III SOV Po—A խմբին։ Գրաբարի շարահյուսական համակարգը որոշակի ընդհանրություններ ունի ֆրանսերենի, իսպաներենի, ինչպես նաև ռոմանական այլ լեզուների հետ, այն դեպքում, երբ ժամանակակից հայերենը, ըստ Գրինբերգի աղյուսակի, նման է հինգիին, բենգալիին, ալթայան լեզուներին։ Անհրաժեշտ է նշել շատ կարևոր մի հանգամանք. դասակարգման հիմք ծառայած հատկանիշների թիվը վերոհիշյալ աղյուսակի մեջ մեծացման կարիք ունի։ Հրացուցիչ այլ հատկանիշների հաշվառումը դասակարգված խմբերը կրաժաններ ենթախմբերի, որոնց նույնպես իրենց հերթին կարելի էր տրոհել¹⁴։ Որքան շատ հատկանիշներ գրվեն դասակարգման հիմքում, այնքան շատ լեզվախմբեր և ենթախմբեր կստացվեն, որքան շատ ստացվեն ենթախմբեր և այլն, այնքան ավելի ամբողջական պատկերացում կստացվի դասակարգման ենթարկված լեզվի կառուցվածքային տիպարանական առանձնահատկությունների մասին։

А. Е. САРКИСЯН

ОПЫТ ТИПОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме

Данная работа является частным применением двух методов Дж. Гринберга в области типологической характеристики древнеармянского языка.

Первым является применение квантитативного подхода Дж. Гринберга к морфологической типологии грабара (древнеармянского языка).

В частности, взяв за основу два параметра—параметр синтеза, параметр словосложения, и проследив эти параметры последовательно на этапах развития древнеармянского языка, приходим к определенным выводам в области как арменистики, так и типологического языкознания.

Приняв язык с индексом синтеза 1,00—1,99 как аналитический, 2,00—2,99 как синтетический, 3,00 и более как полисинтетический, можно сказать, что грабар—синтетич-

¹⁴ Այդպիսի փորձ արել է հենց ինքը Ջ. Գրինբերգը հենվելով մի այնպիսի հատկանիշի վրա, ինչպիսին է՝ անուղղակի խնդիրը նախորդում է (թե հետևում է) ուղիղ խնդրին։ Այդ հատկանիշի հաշվառման շնորհիվ, օրինակ, գերմաներեն և անգլերեն լեզուները կրաժանվեն երկու տարբեր ենթախմբերի։ Այդ մասին նշում է Յու. Ստեպանովը, Տե՛ս Յու. Ստեպանով, նշվ. աշխատությունը, էջ 141։

ческий язык, Грабар, санскрит и англосаксонские языки типологически сходны. В них существует общая направленность типологических изменений—эти языки развивались от синтетизма к аналитизму.

Второй метод, примененный в данной работе, был назван Гринбергом «basic order typology» (типология основного порядка слов). Здесь за основу принимаются несколько основных признаков, касающихся основного порядка слов.

Автор приходит к выводу, что древнеармянский язык входит в группу II SVO Pg.—N.

Необходимо указать, что лишь всесторонним типологическим исследованием можно выявить общий характер типа древнеармянского языка.